Արձանագրություն N: 2

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բաց մրցույթի եղանակով ԵՊՀ անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված, «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/156» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«02» դեկտեմբերի 2020թ Ժամը 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Թ. Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Մ. Խաչատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Է. Թովմասով՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Ա. Պողոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Լ. Գազարյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Մկրտչյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ)

1. Տեղեկություն՝ «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/156» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2020թ.-ի դեկտեմբերի 2-ին, ժամը 10:30-ին՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեում:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	ԵՊՀ անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերում	261000000

3.Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը	Հասցեն և կոնտակտները
«Պահապան 1» ՍՊԸ	ՀՀ., ք. Երևան, Ավան, Քուչակ, 16/2, Հեռ. 010625911
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	ՀՀ., ք. Երևան, Թումանյան 2-րդ փակ., 1 տուն, 2 բն.

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Պահապան 1» և «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

7. Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Պահապան 1» ՍՊԸ		«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ		Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով
		Գինն առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինն առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	արտահայտված /ՀՀ դրամ/
1	ԵՊՀ անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերում	255000000	306000000	240000000	288000000	261000000

8. Հանձնաժողովը գնահատեց մասնակիցների գնային առաջարկները:

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- ընտրված մասնակից ճանաչելու նպատակով («ԵՊՀ-ԲՄԾՁԲ-20/156» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան) - գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2020 թ.-ի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 10:00, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, 209 սենյակ հասցեում,
- հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին կազմակերպել և անցկացնել այդ բանակցությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ _____ Թ.Համբարձումյան

Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ _____ Ա. Պողոսյան

_____ Լ. Գազարյան

Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝

_____ Է. Թովմասով

Քարտուղար՝ _____ Ա.Մկրտչյան